«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

21 մայիսի, 2022 թ. N 3

ՈՐՈՇՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ և ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) կանոնադրության 13.11.7 կետը՝ Ժողովը որոշում է.

1. Հաստատել «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության 2021 թվականի տարեկան գործունեության հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Պալատի պաշտոնական կայքում հրապարակվելուց հետո:

ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **ԹԱԹՈՒԼ ՄՈՎՍԻՍՅԱՆ**

ԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ **ՀԱՅԿ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ**

Հավելված

«Հայաստանի աուդիտորների և
փորձագետ հաշվապահների
պալատ» հասարակական
կազմակերպության 2022թ.
մայիսի 21-ի ընդհանուր ժողովի
N 3 որոշման

Հաստատում եմ

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների
պալատ» հասարակական կազմակերպության նախագահ

Թաթուլ Մովսիսյան

11 մայիսի, 2022թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն

1.	Ընդհանուր դրույթներ	3
2.	Պալատի ստեղծում, հիմնական գործառույթներ, անդամակցություն, հավատարմագրում	3
3.	«Հանրային վերահսկողության խորհուրդ - Մասնագիտացված կառույց» մոդել	4
4.	Անդամակցություն և ռեեստրի վարում	5
5.	Որակավորման համակարգ և կրթություն	6
6.	Շարունակական մասնագիտական զարգացում	10
7.	Մասնագիտական ծառայությունների որակի արտաքին գնահատում	11
8.	Պալատի խորհուրդ, հանձնաժողովներ, աշխատակազմ	12
9.	Պալատի զարգացման և իրավական ակտերի պահանջների պահպանման հետ կապված այլ միջոցառումներ	14
10.	Միջազգային համագործակցություն և կապեր	15
11.	Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության ոլորտներում առկա հիմնախնդիրների բացահայտում և դրանց լուծման վերաբերյալ առաջարկություններ	17
	Հավելվածներ	20

1. Ընդհանուր դրույթներ

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) 2021 թվականի տարեկան գործունեության հաշվետվությունը (այսուհետ՝ Հաշվետվություն) կազմվել է՝ ի կատարումն «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 26–րդ հոդվածի 2–րդ և 3-րդ մասերի և Պալատի կանոնադրության 8.1.8 և 13.11.7 կետերի:

Հաշվետվության կազմման համար հիմք է հանդիսացել Պալատի խորհրդի կողմից 2021թ. հունիսի 16-ի N 44-Լ որոշմամբ հաստատված Պալատի 2021 թվականի տարեկան գործունեության ծրագիրը (այսուհետ՝ Գործունեության ծրագիր):

2. Պալատի ստեղծում, հիմնական գործառույթներ, անդամակցություն, հավատարմագրում

Պալատը ստեղծվել է 1997թ.-ին:

2005թ.-ից Պալատը հանդիսանում է Հաշվապահների միջազգային դաշնության (այսուհետ՝ ՀՄԴ) թղթակից անդամ, իրականացնում է ՀՄԴ կրթական միջազգային ստանդարտներին (այսուհետ՝ ԿՄՍ) համապատասխան աուդիտորների և փորձագետ հաշվապահների որակավորման գործընթաց, սահմանում և վերահսկում է իր անդամների շարունակական մասնագիտական զարգացման պահանջները, իրականացնում է իր անդամ աուդիտորական կազմակերպությունների և աուդիտորների կողմից մատուցվող աուդիտորական ծառայությունների որակի հսկողության պահանջների պահպանման արտաքին գնահատում, ինչպես նաև վարում է անդամ հանդիսացող աուդիտորների, փորձագետ հաշվապահների և աուդիտորական կազմակերպությունների ռեեստրը:

2020թ.-ին Պալատը հավատարմագրվել է որպես մասնագիտացված կառույց և Պալատին պատվիրակվել են ՀՀ-ում հաշվապահական հաշվառման ու աուդիտորական գործունեության ոլորտներում պետական կարգավորման որոշ գործառույթներ:

2021թ.-ին Պալատի և ԱՊՀ երկրների մասնագիտացված կառույցների մասնակցությամբ ստեղծվեց Հաշվապահների և աուդիտորների Եվրասիական խումբը, ինչպես նաև Պալատի և ԵԱՏՄ երկրների մասնագիտացված կառույցների մասնակցությամբ՝ Եվրասիական տնտեսական միության աուդիտորների Խորհրդատվական մարմինը (հավելված 1):

2021թ.-ին ձևավորվել (ընտրվել) են Պալատի կառավարման մարմինները՝ Պալատի նախագահ, Պալատի խորհուրդ՝ 15 անդամից բաղկացած, 7 մասնագիտական և հատուկ հանձնաժողովներ, վերստուգիչ հանձնաժողով, գործադիր տնօրեն և աշխատակազմ:

30.04.2022թ. դրությամբ Պալատին անդամակցում են 678 անդամ, այդ թվում՝ 302 աուդիտոր, 346 փորձագետ հաշվապահ և 30 աուդիտորական կազմակերպություն (հավելված 2):

Պալատի առաքելությունն է խրախուսել Հայաստանում գործող կազմակերպությունների ֆինանսական տեղեկատվության վստահելիությունը օգտագործողների, այդ թվում՝ նաև ներդրողների մոտ: Առաքելությունն իրագործելու նպատակով Պալատը ձգտում է կատարելագործել ՀՀ-ում գործող հաշվապահների և աուդիտորների մասնագիտական կարողությունները՝ որակավորման, շարունակական կրթության, համապարփակ մասնագիտական օժանդակության և որակի հսկողության, ինչպես նաև հաշվապահության և աուդիտի պատվիրատուների հետ մշտական փոխադարձ կապի միջոցով:

Պալատն իրականացնում է ՀՄԴ ԿՄՍ-ներին համապատասխան պրոֆեսիոնալ հաշվապահի և աուդիտորի որակավորում շնորհող կրթական ծրագիր:

2021թ.-ին Պալատն ընդունեց ՀՄԴ Պրոֆեսիոնալ հաշվապահների մասնագիտական էթիկայի կանոնագիրքը՝ նոր խմբագրությամբ:

3. «Հանրային վերահսկողության խորհուրդ - Մասնագիտացված կառույց» մոդել

Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության ոլորտների կարգավորման արդյունավետ համակարգ ձևավորելու նպատակով 2019թ. դեկտեմբերին տեղի ունեցած օրենսդրական փոփոխությունների արդյունքում 2020թ. հունվարի 1-ից հաշվապահական հաշվառման ու աուդիտորական գործունեության ոլորտներում ներդրվեց նոր՝ «Հանրային վերահսկողության խորհուրդ - Մասնագիտացված կառույց» մոդելը: Այն, ըստ էության, նախատեսում է ոլորտների պետական կարգավորման որոշ գործառույթներ պատվիրակել մասնագիտացված կառույցներին (հավելված 3), իսկ այդ գործառույթների պատշաճ կատարման նկատմամբ հսկողության իրականացումը վերապահել ՀՀ ֆինանսների նախարարությանը կից գործող Հանրային վերահսկողության խորհրդին (այսուհետ՝ ՀՎԽ):

Մասնագիտացված կառույցի հավատարմագրումն աուդիտորի վարքագծին ներկայացվող միջազգային չափանիշներին համապատասխանող վարքագծի նորմեր ընդունած հասարակական կազմակերպությանը ՀՀ օրենսդրությամբ ներկայացվող պահանջներին համապատասխանության ճանաչումն է պետության կողմից, որի արդյունքում տրվում է պետական հավատարմագրման վկայական: Հավատարմագրման համար մասնագիտացված կառույցը պետք է ունենա առնվազն 100 ֆիզիկական անձ և 10 իրավաբանական անձ հանդիսացող անդամ, ինչպես նաև ՀՄԴ-ի ԿՄՍ-ներին համապատասխանող որակավորման համակարգ:

Ներկայումս ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հավատարմագրված միակ մասնագիտացված կառույցը Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատն է:

4. Անդամակցություն և ռեեստրի վարում

Մասնագիտացված կառույցի անդամ կարող են լինել միայն.

- աուդիտորական կազմակերպությունները, և
- այն ֆիզիկական անձինք, ովքեր ունեն Մասնագիտացված կառույցի աուդիտորի կամ փորձագետ հաշվապահի որակավորում:

Պալատին (Մասնագիտացված կառույցին) անդամակցումը կատարվում է «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի, Պալատի կանոնադրության և Պալատի անդամակցության կարգի պահանջներին համապատասխան:

Օրենսդրական կարգավորումներով սահմանվեց, որ անցումային շրջանում, սահմանափակ ժամկետով, որը հիմնականում ավարտվում է 2023թ. հունվարի 1-ին, Մասնագիտացված կառույցին կարող են անդամակցել նաև Մասնագիտացված կառույցի աուդիտորի կամ փորձագետ հաշվապահի որակավորում չունեցող այն անձինք, ովքեր ունեն ՀՀ ֆինանսների նախարարության և ԿԲ-ի աուդիտորի կամ գլխավոր հաշվապահի որակավորում:

2021թ-ին նման կարգով Պալատին անդամակցել է 185 անձ, այդ թվում՝ 29 աուդիտոր և 156 փորձագետ հաշվապահ (հավելված 2):

Հարկ է նշել, որ միայն Մասնագիտացված կառույցի անդամ հանդիսացող աուդիտորական կազմակերպությունները կարող են մատուցել աուդիտորական ծառայություններ, և միայն Մասնագիտացված կառույցի անդամ աուդիտորները կարող են բավարարել «Աուդիտորական գործունեության մասին» և «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքներով սահմանված «աուդիտոր» հասկացությանը, ինչպես նաև միայն Մասնագիտացված կառույցի անդամ աուդիտորները և փորձագետ հաշվապահները կարող են հանրային հետաքրքրություն ներկայացնող (այսուհետ՝ ՀՀՆ), խոշոր ու միջին կազմակերպություններում աշխատել որպես գլխավոր հաշվապահ:

Պալատն իրականացնում է էլեկտրոնային եղանակով Պալատի անդամների ռեեստրի վարում և ռեեստրում ներառված՝ Պալատի կողմից սահմանված տեղեկատվության՝ հանրությանը հասանելիության ապահովում: Ռեեստրում կատարվող փոփոխություն-ները և թարմացումները սահմանված ժամկետներում ներկայացվում են ՀՎԽ-ին: ՀՎԽ-ն էլ պարբերաբար իրականացնում է Պալատի ռեեստրի մշտադիտարկում:

01.01.21թ.-ին Պալատի անդամների ընդհանուր թիվը 460 էր, իսկ 31.12.21թ.-ին՝ 649: 2021թ.-ին Պալատի ֆիզիկական անձ անդամների թիվը ավելացել է 194-ով (որոնցից 5-ի անդամակցությունը չեղարկվել է), իսկ աուդիտորական կազմակերպություններինը՝ 9-ով (հավելված 2):

2021թ.-ին Պալատի խորհուրդը հաստատել է մի շարք իրավական ակտեր, որոնք վերաբերում են անդամակցությանը և ռեեստրի վարմանը, այդ թվում՝

- Պալատի անդամներից գանձվող մուտքի վճարների և անդամավճարների չափը (հավելված 13),
- Պալատի Անդամակցության հանձնաժողովի կանոնադրությունը և անհատական կազմը:

2021-2022թթ.-ին առկա են Պալատի անդամների կողմից անդամավճարների վճարման սահմանված ժամկետների խախտումներ կամ չվճարումներ, որոնք քննարկվել են Պալատի խորհրդում:

5. Որակավորման համակարգ և կրթություն

Պալատն իրականացնում է պրոֆեսիոնալ հաշվապահի և աուդիտորի որակավորում շնորհող կրթական ծրագիր, որը ներառում է համապատասխան դասընթացների իրականացում և քննությունների անցկացում՝ տարեկան նվազագույնը երկու քննաշրջանով:

Ինչպես նշվեց, հավատարմագրված մասնագիտացված կառույցը պետք է ունենա ՀՄԴ ԿՄՍ-ներին համապատասխանող որակավորման համակարգ, իսկ ԿՄՍ-ները սահմանում են որակավորման քննական առարկաների, կրթական ծրագրերի, որակավորում շնորհելու չափանիշներ և նվազագույն պահանջներ:

Պալատի կողմից տրվող աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորումը բավարարում է ԿՄՍ-ների պահանջներին, ինչը հավաստվել է ՀՄԴ-ի կողմից և ՀՀ ֆինանսների նախարարության հավատարմագրմամբ:

Պալատի աուդիտորի և/կամ փորձագետ հաշվապահի որակավորում ստանալու համար ֆիզիկական անձինք պետք է հաջողությամբ հանձնեն որակավորման քննությունները, ունենան բարձրագույն կրթություն և անհրաժեշտ մասնագիտական աշխատանքային փորձ: Որակավորումները տրվում են անժամկետ:

Պալատի որակավորման համակարգը հիմնված է Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության Որակավորված երդվյալ հաշվապահների ասոցիացիայի (այսուհետ՝ ACCA) որակավորման համակարգի վրա: Աուդիտորի որակավորման քննությունների ծրագիրը բաղկացած է 7 առարկաներից, իսկ փորձագետ հաշվապահինը՝ 6 առարկաներից (հավելված 4):

2021թ.-ին նախաձեռնվեց Որակավորման ծրագրի առարկաների դասագրքերի թարգմանության, արդիականացման կարևոր և խիստ անհրաժեշտ ծրագիր: Ծրագիրը մոտ 10 ամիս քննարկվել է Համաշխարհային բանկի (այսուհետ՝ ՀԲ), ACCA-ի և BPP հրատարակչության հետ:

Ներկայումս ՀԲ օժանդակությամբ ծրագիրը մեկնարկել է և իրականացվում է Որակավորման ծրագրի 5 առարկաների դասագրքերի թարգմանությունը: Պալատի բյուջեով նախատեսվում է իրականացնել մյուս երկու դասագրքերի մշակումը: Արդյունքում՝ ակնկալվում է հնարավոր սեղմ ժամկետներում ունենալ Որակավորման ծրագրի քննական բոլոր յոթ առարկաների նոր դասագրքեր:

Աշխատանքներ են իրականացվել քննությունների կազմակերպման, քննաթերթերի, շտեմարանների, դասախոսական անձնակազմի, լսարանային տեխնիկական պայմանների բարելավման ուղղությամբ:

2021-22թթ.-ին Պալատը նախապատրաստել է բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը և համապատասխան հայտ է ներկայացրել ACCA-ին՝ Պալատի որակավորման ծրագրի քննությունների մասնակիցներին ACCA համապատասխան քննություններից ազատումներ շնորհելու համար: Այն ուսումնասիրման և քննարկման փուլում է:

2021թ.-ին Պալատի խորհուրդը հաստատել է մի շարք իրավական ակտեր, որոնք վերաբերում են Որակավորման համակարգին, այդ թվում՝

- Պալատի աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորման տրման կարգը,
- Պալատի աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորում ստանալու համար անհրաժեշտ աշխատանքային փորձին վերաբերող պահանջները,
- Պալատի աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորման քննությունների ծրագիրը և որակավորման քննությունների անցկացման կարգը,
- Պալատի որակավորման հանձնաժողովի կանոնադրությունը և անհատական կազմը,
- Պալատի աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորման քննությունների վճարների չափը,
- Պալատի որակավորման քննության արդյունքի բողոքարկման վճարի չափը:

2021թ.-ին մշակվեց և ուժի մեջ մտավ Պալատի աուդիտորի և փորձագետ հաշվապահի պարզեցված կարգով որակավորման տրման կարգը, որը վերաբերում է Պալատին անդամակցած և Պալատի որակավորում չունեցող այն անձանց, ովքեր ունեն ՀՀ ֆինանսների նախարարության և ԿԲ աուդիտորի կամ գլխավոր հաշվապահի որակավորում, ինչպես նաև սահմանափակ ժամկետով Պալատի փորձագետ հաշվապահի վկայական ունեցող անձանց:

Պարզեցված կարգով սահմանվել է, որ վերոնշված որակավորում ունեցող անձինք ազատվում են չորս առարկաների քննություններից և սահմանված ժամկետում Պալատի աուդիտորի որակավորումը ստանալու համար պետք է հաջողությամբ հանձնեն երեք, իսկ փորձագետ հաշվապահի դեպքում՝ երկու առարկաների քննությունները:

Միայն Պարզեցված կարգի շրջանակում ընդգրկված անձինք են ազատվում Որակավորման համակարգով սահմանված փորձի և կրթության համար սահմանված պահանջներից: Բացի այդ՝ Պարզեցված կարգի դեպքում յուրաքանչյուր առարկայի քննությունից ազատման համար սահմանված վճարը 10,000 դրամ է, իսկ այլ դեպքերում քննություններից ազատման համար սահմանված վճարների չափը 30,000 դրամ և 40,000 դրամ է:

Պալատն իրականացնում է միջոցառումներ, որպեսզի Պարզեցված կարգի շրջանակում ընդգրկված անձինք ունենան հավելյալ հնարավորություններ սահմանված ժամկետներում քննությունների հանձնման համար: Մասնավորապես՝ 2022թ.-ին նախատեսվում է Պալատին անդամակցության պահանջը բավարարելու համար Պարզեցված կարգի շրջանակում անհրաժեշտ երկու առարկաների գծով մինչև չորս անգամ իրականացնել քննություն՝ երկուսի փոխարեն:

2021թ.-ին մշակվեց և ուժի մեջ մտավ Պալատի որակավորման քննություններից ազատման կարգը, որով սահմանված են որակավորման քննությունների ծրագրի որոշակի առարկաների քննություններից ազատումներ:

Մասնավորապես՝

- որոշակի պահանջների բավարարման դեպքում առաջին չորս առարկաների քննություններից ազատվում են ՀՀՆ, խոշոր և միջին կազմակերպությունների գլխավոր հաշվապահները, ՀՀ ԿԲ գլխավոր հաշվապահի որակավորման վկայական ունեցող անձինք,
- Հայաստանի հաշվապահների և աուդիտորների ասոցիացիայի քննությունները հանձնած կամ ազատված անձինք՝ համապատասխան առարկաների քննություններից,
- ACCA-ի անդամները՝ բոլոր առարկաների քննություններից, իսկ ACCA-ի քննությունները հանձնած կամ ազատված անձինք՝ համապատասխան առարկաների քննություններից, բացառությամբ «ՀՀ հարկային օրենսդրություն» և «Իրավագիտության հիմունքներ» առարկաների:

2021թ.-ին 2 կիսամյակով իրականացված քննաշրջանների դասընթացներին մասնակցել են ընդամենը 506 անձ, քննություններին՝ 434 անձ, որոնցից հաջողություն գրանցել են 280-ը (հավելված 5): Նախորդ տարվա նկատմամբ դասընթացի և քննությունների մասնակիցների աճը կազմել է մոտ 95 %:

2021թ.-ին իրականացվել են.

- Պալատի աուդիտորի կամ փորձագետ հաշվապահի որակավորում տալու համար դիմած 19 անձանց՝ սահմանված պահանջներին համապատասխանության ուսումնասիրություն և որակավորում տալու, իսկ 2-ին՝ չտալու վերաբերյալ որոշումներ,
- Որակավորման քննություններից ազատումների համար դիմած 34 անձանց՝ սահմանված պահանջներին համապատասխանության ուսումնասիրություն և քննություններից ազատելու, իսկ 4-ին՝ մերժելու վերաբերյալ որոշումներ:

Պալատը, որակավորում շնորհող կրթական ծրագրից և շարունակական մասնագիտական զարգացման դասընթացներից բացի, իրականացնում է 50 ժամ տևողությամբ «Հաշվապահական հաշվառում և հարկային օրենսդրություն» թեմայով դասընթաց՝ սկսնակ և գործող հաշվապահների համար:

2021թ.-ին իրականացվել է այդպիսի 4 դասընթաց, որին մասնակցել է 34 անձ:

6. Շարունակական մասնագիտական զարգացում

Պալատի ֆիզիկական անձ անդամների շարունակական մասնագիտական զարգացման (այսուհետ՝ ՇՄԶ) պահանջը սահմանված է «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին», «Աուդիտորական գործունեության մասին» և «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքներով: Այն հանդիսանում է նաև ԿՄՍ-ների և Պալատի կողմից ստանձնված ՀՄԴ անդամակցության պարտադիր պահանջ:

Ինչպես նշվեց, Պալատի որակավորումը տրվում է անժամկետ: ՇՄԶ-ի նպատակն է տնտեսության տարբեր բնագավառներում Պալատի անդամից պահանջվող մասնագիտական աշխատանքի բարձր ստանդարտների ապահովման համար անհրաժեշտ գիտելիքների պարբերաբար նորացումը: Այն հնարավորություն կտա հանրությանը տրամադրել բավարար երաշխիքներ, որ Պալատի անդամը տիրապետում է հաշվապահական հաշվառման, հարկային, ֆինանսական հաշվետվությունների պատրաստման, աուդիտի և մասնագիտությանն առնչվող ոլորտների վերաբերյալ մասնագիտական արդի գիտելիքներին:

Պալատի անդամ աուդիտորները և փորձագետ հաշվապահները պարտավոր են Պալատի անդամ դառնալու տարվան հաջորդող տարվանից սկսած անցնել ՇՄԶ: ՇՄԶ տևողությունը յուրաքանչյուր օրացուցային տարվա համար չպետք է պակաս լինի 20 ժամից, իսկ յուրաքանչյուր երկու հաջորդական տարիների համար չպետք է պակաս լինի 80 ժամից: ՇՄԶ պահանջների չպահպանման դեպքում, համաձայն ՀՀ օրենսդրության և ԿՄՍ-ների կարգավորումների, շնորհված որակավորումները չեղարկվում են:

Պալատի ֆիզիկական անձ անդամների շարունակական մասնագիտական զարգացմանը ներկայացվող պահանջների պահպանումը հանդիսանում է Պալատի առաջնահերթություններից: Պալատն իրականացնում է աշխատանքներ՝ Պալատի անդամների ՇՄՋ կարիքները բավարարելու համար:

2021թ. ընթացքում կազմակերպվել են 22 ՇՄՋ դասընթացներ, սեմինարներ, վերապատրաստումներ և նմանատիպ այլ միջոցառումներ աուդիտորական գործունեության միջազգային ստանդարտների, ՖՀՄՍ-ների, հարկային օրենսդրության, որակի հսկողության պահանջների պահպանման արտաքին գնահատման վերաբերյալ, 73 ժամ ընդհանուր տևողությամբ, որին մասնակցել են 210 անդամներ: Հարկային հանձնաժողովը իրականացրել է անվճար ՇՄՋ-ներ Պալատի անդամ արցախյան 44-օրյա պատերազմի մասնակիցների, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամների համար:

2021թ.-ին մշակվել է Պալատի անդամ աուդիտորների և փորձագետ հաշվապահների կողմից Պալատին ներկայացված ՇՄՋ հաշվետվությունների ուսումնասիրման կարգ:

ՇՄՋ-ի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Պալատի աուդիտոր և փորձագետ հաշվապահ անդամների ՇՄՋ նոր կարգով, որը գործում է 2022թ. հունվարի 1-ից:

2022թ. բյուջեով նախատեսված է մասամբ ֆինանսավորել Պալատի անդամների ՇՄՋ միջոցառումներին մասնակցությունը: Մասնավորապես՝ Պալատի անդամները կարող 40 ժամ ընդհանուր տևողությամբ 200,000 դրամ կազմող գումարով ՇՄՋ դասընթացների համար վճարել 100,000 դրամ, իսկ 20 ժամ ընդհանուր տևողությամբ 100,000 դրամ կազմող գումարով ՇՄՋ դասընթացների համար վճարել 60,000 դրամ:

7. Մասնագիտական ծառայությունների որակի արտաքին գնահատում

Ինչպես նշվեց, Պալատին, որպես հավատարմագրված կառույցի, պատվիրակվել են ՀՀ-ում հաշվապահական հաշվառման ու աուդիտորական գործունեության ոլորտներում պետական կարգավորման գործառույթներ, այդ թվում՝ աուդիտորական կազմակերպությունների և աուդիտորների կողմից մատուցվող աուդիտորական ծառայության որակի հսկողության, ինչպես նաև փորձագետ հաշվապահների և աուդիտորական կազմակերպությունում չաշխատող աուդիտորների նկատմամբ ներկայացվող պահանջների պահպանման արտաքին գնահատում (այսուհետ՝ Արտաքին գնահատում):

Արտաքին գնահատման ընթացակարգերը մշակվում և հաստատվում են «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

2022թ.-ին Ասիական բանկի ֆինանսավորմամբ և ՀՀ ֆինանսների նախարարության պատվերով Անգլիայի և Ուելսի երդվյալ հաշվապահների ինստիտուտն իրականացնում է Արտաքին գնահատման ընթացակարգերի մշակման աշխատանքներ: Պալատի, առանձին աուդիտորական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ տեղի են ունեցել փորձագետների հանդիպումներ: Ներկայացվել և քննարկվել են Արտաքին գնահատման ընթացակարգերի մշակման փուլերը, ժամանակացույցը և համակարգի ներդրմանն առնչվող այլ հարցեր: Արտահայտվել է պատրաստակամություն Արտաքին գնահատման ընթացակարգերի մշակմանն աջակցություն և օժանդակություն ցուցաբերելու համար:

Արտաքին գնահատման ընթացակարգերի մշակումը և ներդրումը նախատեսվում է ավարտել 2022թ.-ին:

Պալատի խորհուրդը հաստատել է Արտաքին գնահատման ենթակա աուդիտորական կազմակերպությունների ցանկը: Արտաքին գնահատման ընթացակարգերի առկայության դեպքում Արտաքին գնահատումը նախատեսվում է իրականացնել 9 աուդիտորական կազմակերպություններում 2022թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին:

2021թ.-ին իրականացվել են աուդիտորական կազմակերպությունների հետ քննարկում, իրազեկում, ՇՄՋ միջոցառում՝ Պալատի երկու հատուկ հանձնաժողովների գործառույթների, Արտաքին գնահատման ընթացակարգերի ու գործընթացի վերաբերյալ:

2022թ.-ին նախատեսված է իրականացնել Արտաքին գնահատման ընթացակարգերի, աուդիտի փաստաթղթավորման, որակի պահանջների պահպանման վերաբերյալ 45 ժամ ընդհանուր տևողությամբ 22 ՇՄՋ դասընթաց:

2021թ.-ին ՀԲ ֆինանսական և կազմակերպչական օժանդակությամբ նախաձեռնվեց իրականացնել ևս մեկ կարևոր ծրագիր. մշակել աուդիտորական փաստաթղթավորման մեթոդական ձեռնարկ (ուղեցույց) և ծրագրային նախատիպը, որը հետագայում հնարավորություն կտա մշակել աուդիտի իրականացման համակարգչային ծրագիրը և տեղայնացնել այն՝ աուդիտորական կազմակերպությունների կողմից օգտագործելու համար:

Այս ծրագիրը մեկնարկել է 2021թ.-ին և նախատեսվում է ավարտել 2022թ. հունիսին:

8. Պալատի խորհուրդ, հանձնաժողովներ, աշխատակազմ

<u>Պալատի խորհուրդ</u>

Պալատի գործող խորհուրդը ձևավորվել է 2021թ. մայիսին տեղի ունեցած Պալատի ընդհանուր ժողովի կողմից և կազմված է 15 անդամներից (հավելված 6):

Պալատի կանոնադրության համաձայն՝ Պալատի խորհրդի նիստերն անցկացվում են առնվազն 1 անգամ 2 ամսվա ընթացքում: 2021թ.-ին տեղի է ունեցել Պալատի խորհրդի 25 նիստ, ընդունվել են 142 լոկալ և անհատական իրավական ակտեր, մասնավորապես՝ հաստատվել են Պալատի 2021 և 2022թթ. բյուջեներն ու գործունեության ծրագրերը, 2020թ. տարեկան գործունեության հաշվետվությունը, Պարզեցված կարգը, Քննություններից ազատման կարգը, ՇՄՋ կարգը, ընդունվել են որոշումներ՝ 9 իրավաբանական և 185 ֆիզիկական անձանց՝ Պալատին անդամակցության մասին, Պալատի հանձնաժողովների կանոնադրություններն ու կազմերը, գործունեության ծրագրերն ու հաշվետվությունները և այլն: Պալատի խորհրդի նիստերին խորհրդի անդամների ընդհանուր մասնակցությունը կազմել է մոտ 79%:

Պալատի հանձնաժողովներ

2021թ.-ին ձևավորվել են Պալատի յոթ հանձնաժողովներ, որոնցից չորսը՝ հատուկ, երկուսը՝ մասնագիտական և մեկը՝ մասնագիտական ժամանակավոր հանձնաժողով (հավելված 7): Տեղի են ունեցել Պալատի հանձնաժողովների 52 նիստեր, կազմակերպվել են 24 միջոցառումներ:

Կանոնադրական գործառույթները սահմանված ժամկետներում և պատշաճ իրականացնելու համար ծանրաբեռնված աշխատել են Անդամակցության և Որակավորման հանձնաժողովները: Աուդիտորական գործունեության հանձնաժողովը իրականացրել է բազմաթիվ ՇՄՋ միջոցառումներ, ինչպես նաև նախաձեռնել է Պալատի անդամների բարձրացրած հարցերի քննարկում և գրավոր իրազեկումների տրամադրում:

Պալատի աշխատակազմ

2021թ.-ին հաստատվել են Պալատի աշխատակազմի կառուցվածքը, հաստիքացուցակը, նշանակվել է նոր գործադիր տնօրեն, աշխատակազմում կատարվել են համալրումներ: Պալատի աշխատակազմն իրականացրել է Կանոնադրությամբ սահմանված գործառույթները, կատարել է բյուջեով սահմանված ծախսերը, կազմակերպել և իրականացրել է դասընթացներ, քննություններ, միջոցառումներ, աշխատանքներ է իրականացրել միջազգային համագործակցության ուղղությամբ: 2021թ. ընթացքում հավաքագրվել և վերլուծվել են աուդիտորական կազմակերպությունների տարեկան և եռամսյակային հաշվետվությունները, ինչպես նաև սահմանված ժամկետներում ՀՎԽ են ներկայացվել հաշվետվություններ՝ Պալատի ռեեստրի փոփոխությունների վերաբերյալ:

Աշխատանքների կազմակերպում, գործառույթների իրականացում, վերահսկողություն

Պալատն աշխատանքներն իրականացնում է թափանցիկ՝ պարբերաբար քննարկելով անդամներին հուզող հարցերը: Կատարված հսկայածավալ աշխատանքների շնորհիվ Պալատը դարձել է պրոֆեսիայի հավաքատեղի: Պալատում լավագույնս

կազմակերպվում և իրականացվում են ՇՄՋ միջոցառումները, որակավորման դասընթացները, կլոր սեղանները, Խորհրդի ու հանձնաժողովների նիստերը, մասնագիտական քննարկումները, որոնց մասնակցած անձանց միջին օրական ընդհանուր թվաքանակը հասել է հարյուրի:

Օրենքներով, Պալատի կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով կանոնակարգված են Խորհրդի անդամների իրավունքները և պարտականությունները: Պալատի ընդհանուր ժողովի կողմից ընտրվել է և միայն նրան է հաշվետու վերստուգիչ հանձնաժողովը, որն օժտված է հսկողական գործառույթների իրականացմամբ: Յուրաքանչյուր տարի իրականացվում է Պալատի ֆինանսական հաշվետվությունների աուդիտ: Բացի այդ՝ «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Պալատի գործառույթների նկատմամբ վերահսկողություն է իրականացնում ՀՎԽ-ն:

9. Պալատի զարգացման և իրավական ակտերի պահանջների պահպանման հետ կապված այլ միջոցառումներ

Պալատի հետագա ինստիտուցիոնալ հզորացումը պայմանավորված է բավարար իրավական հիմքերի և ֆինանսական ռեսուրսների առկայությամբ:

«Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքում հստակ սահմանված են Պալատի (Մասնագիտացված կառույցի) գույքի (ռեսուրսների) ձևավորման աղբյուրները: Գույքի (ռեսուրսների) ձևավորման հիմնական աղբյուրներ են հանդիսանում.

- անդամներից գանձվող անդամավճարները,
- մասնագիտական որակավորման քննությունների անցկացումից ստացվող վճարները,
- դասընթացների անցկացումից ստացվող վճարները,
- հրապարակումների վաճառքից ստացված հասույթները,
- պետական և ոչ պետական կառույցներից (այդ թվում՝ օտարերկրյա) ստացված նվիրատվությունները, դրամաշնորհները:

Վերը ներկայացված ռեսուրսների առկայությունը բավարար հիմքեր է ապահովում Պալատի հետագա ինստիտուցիոնալ հզորացման համար:

2021թ.-ին Պալատը նախաձեռնեց ֆունկցիոնալ նոր հնարավորություններով կայքի պատրաստման աշխատանքներ, և այն գործարկման փուլում է: Կայքում տեղադրված են օգտակար նյութեր հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության վերաբերյալ, տեղեկություններ որակավորման համակարգի դասընթացների ու

քննությունների, ՇՄՋ միջոցառումների, պրոֆեսիայի անցած ճանապարհի, փոփոխությունների ու զարգացումների մասին, ինչպես նաև նորություններ: Պալատի յուրաքանչյուր անդամի համար նախատեսված է անձնական գրասենյակ, որի միջոցով անդամը հնարավորություն ունի կատարել առցանց վճարումներ, Պալատ ներկայացնել հաշվետվություններ: Գործարկվել է ռեեստրի վարման էլեկտրոնային նոր ծրագիրը:

2021թ.-ին իրականացվել է Պալատի կապիտալ վերանորոգում՝ համաձայն Խորհրդի կողմից հաստատված բյուջեի: Մասնավարապես փոխարինվել են հատակը, պատուհանները, օդափոխիչ սարքերը, լուսամփոփները, կատարվել է միջանցքի, լսարանների և աշխատասենյակների վերանորոգում: Ձեռք են բերվել համակարգիչներ, տպիչներ, բարելավվել են լսարանային պայմանները և տեխնիկական հագեցվածությունը:

2022թ.-ին Պալատը շարունակելու է մշակել և ներդնել «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին», «Հաշվապահական հաշվառման մասին», «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքներով և Պալատի կանոնադրությամբ սահմանված ներքին իրավական ակտերը, ինչը հնարավորություն կտա արդյունավետ և ժամանակին իրականացնել Պալատի խնդիրները և գործառույթները:

10. Միջազգային համագործակցություն և կապեր

<u>Հաշվապահների միջազգային դաշնություն</u>

Պալատը 2005թ.-ից հանդիսանում է ՀՄԴ թղթակից անդամ:

Ամբողջ աշխարհում աուդիտ և հաշվապահություն մասնագիտությունների համաշխարհային մասնագիտական մարմին ճանաչված հեղինակավոր այս կառույցին անդամակցում են 130 երկրներում գործող 180 կազմակերպություններ, որոնցում ընդգրկված են կառավարման մարմիններ, հասարակական տարբեր կառույցներ, տնտեսության, կրթության, գիտության և այլ ոլորտները ներկայացնող 3 մլն պրոֆեսիոնալ հաշվապահներ, ներառյալ՝ աուդիտորներ, կառավարչական հաշվառման մասնագետներ, հարկային խորհրդատուներ, ներքին աուդիտորներ: Պալատը ՀՄԴ անդամակցությամբ ստանձնել է մի շարք պարտավորություններ, այդ թվում՝ որակի և մասնագիտական միջազգային ստանդարտների ապահովման, ԿՄՍ-ներով որակավորման գործընթացի կազմակերպման և այլն: Այդ նպատակներին հասնելու համար մշակվել է համապատասխան գործողությունների պլան, որը հասանելի է ՀՄԴ կայքում՝ http://www.ifac.org/about-ifac/membership/compliance-program/compliance-responses (հավելված 8):

ՀՄԴ կենտրոնական գրասենյակի և ՀՄԴ անդամ այլ մասնագիտացված կառույցների ներկայացուցիչների հետ տեղի են ունեցել հանդիպումներ, որոնց ընթացքում քննարկվել են Պալատի ստանձնած պարտավորությունների կատարումը, ՀՄԴ լիիրավ

անդամ դառնալու հնարավորությունները և գործողությունների պլանը, մասնագիտական ծառայությունների որակի պահանջների պահպանումը և արտաքին գնահատումը, որակավորման ծրագիրը և քննական առարկաների քննություններից ազատումը:

Պալատը շարունակելու է խորացնել կապերը ՀՄԴ-ի հետ, այդ թվում՝ առցանց սեմինարներին ու տեղեկատվություններին Պալատի անդամների հասանելիությունը ապահովելու, միջազգային փորձի ու մասնագիտական ստանդարտների վերաբերյալ քննարկումներ իրականացնելու համար:

Համաշխարհային բանկ

Ինչպես նշվեց, ՀԲ-ի ֆինանսական օժանդակությամբ իրականացվում են Պալատի համար շատ կարևոր երկու ծրագիր՝ Որակավորման քննական առարկաների դասագրքերի թարգմանությունը և աուդիտորական փաստաթղթավորման մեթոդական ձեռնարկի (ուղեցույց) ու ծրագրային նախատիպի մշակումը:

Քննարկվել է հետագայում ևս ՀԲ-ի մասնակցությամբ իրականացնել Պալատի համար կարևոր այլ ծրագրեր:

Շնորհակալություն ՀԲ-ի մեր գործընկերներին՝ ցուցաբերած օժանդակության համար:

ACCA

Տեղի են ունեցել ACCA-ի ներկայացուցիչների հետ բազմաթիվ հանդիպումներ և քննարկումներ՝ Որակավորման քննական առարկաների դասագրքերի թարգմանության, ինչպես նաև Պալատի որակավորման ծրագրի քննությունների մասնակիցներին ACCA-ի համապատասխան քննություններից ազատումներ շնորհելու համար: Այդ և այլ ուղղություններով հնարավոր համագործակցությունը հետագայում ևս կիրականացվի:

ԱՊՀ և ԵԱՏՄ- Տարածաշրջանային համագործակցություն

2021թ. դեկտեմբերին Պալատի և ԱՊՀ ու ԵԱՏՄ անդամ պետությունների մասնագիտացված այլ կառույցների մասնակցությամբ ստեղծվել են.

1. Հաշվապահների և աուդիտորների Եվրասիական խումբը (այսուհետ՝ ՀԱԵԽ), և
2. Եվրասիական տնտեսական միության աուդիտորների Խորհրդատվական մարմինը (այսուհետ՝ ԵԱՏՄ ԱԽՄ):

ՀԱԵԽ-ի անդամ են ԱՊՀ պետությունների 10 մասնագիտացված կազմակերպություններ: ՀԱԵԽ-ի նպատակն է համատեղել ջանքերը՝ ուղղված ԱՊՀ պետություններում մասնագիտության առջև ծառացած խնդիրների լուծմանը, մասնագիտության հեղինակության բարձրացմանը, մասնագիտական ստանդարտների (փոփոխությունների) նախագծերի քննարկմանը, փորձի փոխանակմանը: ՀԱԵԽ-ը ձգտում է դառնալ ՀՄԴ-ի ցանցային գործընկեր:

ԵԱՏՄ ԱԽՄ անդամ են ԵԱՏՄ բոլոր հինգ պետությունների մասնագիտացված կազմակերպությունները: ԵԱՏՄ անդամ պետությունների կողմից ստորագրվել է Աուդիտորական գործունեության իրականացման համաձայնագիր, որի շրջանակում ԵԱՏՄ անդամ պետություններում ձևավորվում է աուդիտորական ծառայությունների միասնական շուկա: ԵԱՏՄ ԱԽՄ-ի նպատակն է մասնագիտացված կառույցների (կազմակերպությունների) մակարդակով քննարկել և լուծել այն խնդիրները, որոնք կարող են ծագել աուդիտի շուկայի ազատականացմամբ պայմանավորված, ձևավորել համաձայնեցված քաղաքականություն որակավորումների շնորհման և մասնագիտական ծառայությունների որակի պահանջների պահպանման արտաքին գնահատման համար:

Տեղի են ունեցել երկու կառույցների ընդհանուր ժողովներ (նախագահության նիստեր), ստեղծվել են հանձնաժողովներ, հաստատվել են 2022թ. միջոցառումների պլանները, քննարկվել են միջազգային կոնֆերանսների հրավիրման և այլ հարցեր:

Պալատը ներկայացված է երկու կառույցների հանձնաժողովներում և ստանձնել է երկու հանձնաժողովի նախագահությունը (հավելված 9):

2021թ. դեկտեմբերին ՀԱԵԽ-ի հարթակում Պալատն ակտիվորեն մասնակցեց «Պակաս բարդ կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների աուդիտի իրականացման» Աուդիտի միջազգային ստանդարտի նախագծի քննարկումներին:

11. Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության ոլորտներում առկա հիմնախնդիրների բացահայտում և դրանց լուծման վերաբերյալ առաջարկություններ

<u>Հաշվապահական հաշվառման իրավական կարգավորում</u>

«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ՀՀՆ, խոշոր և միջին կազմակերպությունները ֆինանսական հաշվետվությունները պատրաստում են ամբողջական ՖՀՄՍ-ների կամ ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի համապատասխան: Միկրոկազմակերպությունների համար պետք է մշակվի առանձին ձեռնարկ:

Ներկայումս հրապարակվել և կիրառվում են ֆինանսական հաշվետվությունների հայեցակարգային հիմունքները, ամբողջական ՖՀՄՍ-ները, ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ն, կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման օրինակելի հաշվային պլանները և օրինակելի հաշվային պլանների կիրառման հրահանգները:

Նախագծային փուլում է ՀՎԽ-ի կողմից մշակված միկրոկազմակերպությունների հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ձեռնարկը: Նախատեսվում է 2022թ.-ին մշակել նաև միկրոկազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության

հաշվապահական հաշվառման օրինակելի հաշվային պլանը և հաշվային պլանի կիրառման հրահանգը:

Աուդիտորական գործունեության իրավական կարգավորում

«Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ հրապարակվել և կիրառվում են աուդիտորական գործունեության միջազգային ստանդարտները, Մասնագիտական էթիկայի կանոնագիրքը, որոնց հայերեն թարգմանությունը ապահովում է ՀՎԽ-ն:

2019թ.-ից հետո ՀՄԴ-ի Աուդիտի և հավաստիացման միջազգային ստանդարտների խորհուրդը հրապարակել է աուդիտորական գործունեության միջազգային ստանդարտներում փոփոխություններ, լրացումներ և նոր ստանդարտներ, որոնց հայերեն թարգմանությունները դեռևս չեն իրականացվել:

Արտաքին գնահատում

Պալատը (Մասնագիտացված կառույցը) պետք է իրականացնի անդամ աուդիտորական կազմակերպությունների և աուդիտորների կողմից մատուցվող աուդիտորական ծառայությունների որակի հսկողության պահանջների պահպանման արտաքին գնահատում:

Ինչպես նշվեց, Արտաքին գնահատման ընթացակարգերի մշակումն իրականացնում է ՀՀ ֆինանսների նախարարությունը, և այն ընթացքում է: Վերջինիս առկայության դեպքում Պալատը պետք է ներդնի Արտաքին գնահատման համակարգը, Պալատի ընդհանուր ժողովը պետք է հաստատի Կարգապահական պատասխանատվության միջոցների կիրառման կարգը, և պետք է սահմանված ժամանակացույցի համաձայն աուդիտորական կազմակերպություններում իրականացնի արտաքին գնահատում:

Աուդիտորական ծառայությունների շուկա, բյուջե, իրավակարգավորումներ

«Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ պարտադիր աուդիտի ենթակա են ՀՀՆ, խոշոր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները (հավելված 10), իսկ այդ պահանջը չպահպանելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ Օրենսգրքով սահմանված են պատասխանատվության միջոցներ:

2021թ.-ին Պալատի խորհուրդը հաստատել է աուդիտորական գործունեությանը վերաբերող տարեկան հաշվետվության և եռամսյակային հաշվարկ-տեղեկանքի ձևերը, դրանց լրացման և ներկայացման կարգը:

2021թ.-ի համար Պալատին անդամակցած 29 աուդիտորական կազմակերպությունների (հավելված 11) կողմից Պալատին ներկայացված հաշվետվությունները վերլուծելով՝

1. Պարտադիր աուդիտի ենթարկված առևտրային կազմակերպությունների քանակը 407 է: ՀՎԽ-ի տվյալներով այդպիսի կազմակերպությունների քանակը մոտ 460 է, այսինքն՝ օրենքով սահմանված կարգով պարտադիր աուդիտի չեն ենթարկվել մոտ 50 առևտրային կազմակերպություններ: Բացի այդ՝ առկա են աուդիտի ենթարկված կազմակերպություններ, որոնք ֆինանսական հաշվետվությունները սահմանված կարգով՝ ամբողջական, չեն հրապարակել: Անհրաժեշտ է համապատասխան փոփոխություններ կատարել Վարչական օրենսգրքում՝ խստացնելով պարտադիր աուդիտը չիրականացնող կազմակերպությունների նկատմամբ կիրառվող վարչական տուգանքները:

2. Օրենսդրական կարգավորումների համաձայն՝ միայն Մասնագիտացված կառույցի անդամ ֆիզիկական անձինք կարող են ՀՀՆ, խոշոր ու միջին կազմակերպություններում աշխատել որպես գլխավոր հաշվապահ: Նախատեսվում է աուդիտորական կազմակերպությունների կողմից Պալատին ներկայացվող հաշվետվություններում կատարել փոփոխություններ և ստանալ վերը նշվածի վերաբերյալ տեղեկատվություն, որը հնարավորություն կտա անել վերլուծություններ ու կատարել եզրահանգումներ: Պալատի ռեեստրում առկա տեղեկատվության վերլուծության հիման վրա կարելի է ասել, որ էական է սահմանված երեք տիպի կազմակերպություններում աշխատող գլխավոր հաշվապահների քանակը, ովքեր Մասնագիտացված կառույցի անդամ չեն: Այս առումով էլ անհրաժեշտություն է առաջանում փոփոխություններ նախատեսել Վարչական օրենսգրքում:

3. Աուդիտորական ծառայությունների ընդհանուր հասույթը կազմել է 2.8 մլրդ դրամ, որից՝ 218 մլն դրամը՝ արտահանվող ծառայություններ: Ընդհանուր հասույթում 6 խոշոր աուդիտորական կազմակերպությունների մասնաբաժինը կազմել է մոտ 77%: Պալատի բյուջեում 29 աուդիտորական կազմակերպությունների վճարած հաստատուն և փոփոխուն անդամավճարների մասնաբաժինը կազմում է մոտ 29%, իսկ խոշոր 6 կազմակերպություններինը՝ մոտ 14% (հավելված 12):

4. Հաշվի առնելով խոշոր աուդիտորական կազմակերպությունների մասնաբաժինը ընդհանուր շուկայում և միջազգային ձևավորված պրակտիկան, առաջարկվել է աուդիտորական կազմակերպություններին Հայաստանում մասնագիտական պատասխանատվության շրջանակներում իրականացնել, օրինակ՝ անվճար ՇՄՋ դասընթացներ, սեմինարներ, պրոֆեսիայի զարգացմանն ուղղված միջոցառումներ: Նման առաջարկ կատարվել է նաև Պալատի խորհրդի անդամներին: Այդ նախաձեռնությունների իրականացման վերաբերյալ կիրազեկվի Պալատի անդամներին:

5. Նախկինում աուդիտորական կազմակերպությունները լիցենզիայի համար վճարում էին տարեկան պետական տուրք 250 հազար դրամ, որը հիմա փոխարինում է հաստատուն անդամավճարին: Օրենսդրական փոփոխությունների արդյունքում աուդիտորական կազմակերպությունները վճարում են նաև փոփոխուն անդամավճար, որը 2021թ.-ին կազմել 24,693 հազար դրամ, իսկ մեկ

աուդիտորական կազմակերպության միջին հաշվարկով՝ տարեկան ընդամենը 851 հազար դրամ: Հարկ է նշել, որ Պալատը, որպես մասնագիտացված կառույց, պետք է իրականացնի պատվիրակված գործառույթներ, այդ թվում՝ մասնագիտական ծառայությունների որակի պահանջների պահպանման արտաքին գնահատում, որի ֆինանսավորումը կատարվում է աուդիտորական կազմակերպությունների անդամավճարների հաշվին: Մոտավոր գնահատումներով՝ միայն այդ պատվիրակված գործառույթի իրականացման համար յուրաքանչյուր կազմակերպության գծով Պալատի ծախսը կկազմի մոտ 1,6 մլն դրամ:

1997թ. հոկտեմբեր	Ստեղծվել է «Որակավորված հաշվապահների միություն» ՀԿ-ն
1999թ. սեպտեմբեր	«Որակավորված հաշվապահների միություն» ՀԿ-ն անվանափոխվել է որպես «Հայաստանի հաշվապահների և աուդիտորների ասոցիացիա» ՀԿ
2005թ. նոյեմբեր	«Հայաստանի հաշվապահների և աուդիտորների ասոցիացիա» ՀԿ-ն անդամակցել է Հաշվապահների միջազգային դաշնությանը որպես թղթակից անդամ
2020թ. օգոստոս	«Հայաստանի հաշվապահների և աուդիտորների ասոցիացիա» ՀԿ-ն անվանափոխվել է որպես «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» ՀԿ
2020թ. ապրիլ	«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» ՀԿ-ն հավատարմագրվել է որպես Մասնագիտացված կառույց
2021թ. դեկտեմբեր	«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» ՀԿ-ն անդամակցել է Հաշվապահների և աուդիտորների Եվրասիական խմբին
2021թ. դեկտեմբեր	«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» ՀԿ-ն անդամակցել է Եվրասիական տնտեսական միության աուդիտորների Խորհրդատվական մարմնին

Հավելված 2

Պալատի անդամներ

Ամսաթիվ	Ընդամենը	այդ թվում՝		
		կազմակերպություն	աուդիտոր	փորձագետ հաշվապահ
31.12.2020թ.	460	20	268	172
31.12.2021թ.	649	29	297	323
30.04.2022թ.	678	30	302	346

Պալատին անդամակցություն

Ժամանակաշրջան	Ընդամենը	այդ թվում՝		
		կազմակերպություն	աուդիտոր	փորձագետ հաշվապահ
2020թ.	460	20	268	172
2021թ.	194	9	29	156
2022թ. (մինչև 30.04.2022թ.)	38	1	10	27

Պալատին անդամակցության դադարեցում և չեղարկում

Ժամանակաշրջան	Ընդամենը	այդ թվում՝		
		կազմակերպություն	աուդիտոր	փորձագետ հաշվապահ
2020թ.	-	-	-	-
2021թ.	5	-	-	5
2022թ. (մինչև 30.04.2022թ.)	9	-	5	4

«Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Մասնագիտացված կառույցն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) հաստատում է իր անդամների նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոցների կիրառման կարգը,

2) իրականացնում է աուդիտորների և փորձագետ հաշվապահների որակավորման գործընթացը,

3) սահմանում է իր անդամ աուդիտորների և փորձագետ հաշվապահների շարունակական մասնագիտական զարգացման պահանջները,

4) իրականացնում է հսկողություն իր անդամ աուդիտորների և փորձագետ հաշվապահների շարունակական մասնագիտական զարգացման պահանջների պահպանման նկատմամբ,

5) իրականացնում է իր անդամ աուդիտորական կազմակերպությունների և աուդիտորների կողմից մատուցվող աուդիտորական ծառայությունների որակի հսկողության պահանջների պահպանման արտաքին գնահատում,

6) իրականացնում է իր անդամ փորձագետ հաշվապահների և աուդիտորական կազմակերպությունում չաշխատող աուդիտորների նկատմամբ սույն օրենքով, «Հաշվապահական հաշվառման մասին» և «Աուդիտորական գործունեության մասին» օրենքներով ներկայացվող պահանջների պահպանման արտաքին գնահատում,

7) իրականացնում է աուդիտորական գործունեությունը և հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերով իրեն վերապահված այլ լիազորություններ:

Հավելված 4

Պալատի որակավորման ծրագրի քննական առարկաներ

հ/հ	*Առարկա*	*Աուդիտոր*	*Փորձագետ հաշվապահ*
1	Ֆինանսական հաշվառման հիմունքներ	v	v
2	Ֆինանսական տեղեկատվություն կառավարման համար	v	v
3	Իրավագիտության հիմունքներ	v	v
4	ՀՀ հարկային օրենսդրություն	v	v
5	Ֆինանսական կառավարում և վերահսկողություն	v	v
6	Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում	v	v
7	Աուդիտ և ներքին վերահսկողություն	v	

Հավելված 5

Որակավորման ծրագրի դասընթացներ և քննություններ

հ/հ	*Առարկա*	*Դասընթացներին մասնակցություն*			*Քննություններին մասնակցություն*			
		Ընդամենը 2021թ.	1-ին քննաշրջան	2-րդ քննաշրջան	Ընդամենը 2021թ.	1-ին քննաշրջան	2-րդ քննաշրջան	Հաջողությամբ հանձնել են
1	Ֆինանսական հաշվառման հիմունքներ	**173**	95	78	**121**	49	72	**87**
2	Ֆինանսական տեղեկատվություն կառավարման համար	**43**	24	19	**50**	23	27	**32**
3	Իրավագիտության հիմունքներ	**27**	11	16	**42**	18	24	**38**
4	ՀՀ հարկային օրենսդրություն	**48**	18	30	**61**	22	39	**42**
5	Ֆինանսական կառավարում և վերահսկողություն	**118**	19	99	**67**	15	52	**21**
6	Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում	**91**	26	65	**88**	24	64	**56**
7	Աուդիտ և ներքին վերահսկողություն	**6**	0	6	**5**	2	3	**4**
Ընդամենը		**506**	**193**	**313**	**434**	**153**	**281**	**280**

Հավելված 6

Պալատի խորհուրդ

հ/հ	Անուն, ազգանուն	Պաշտոն	Նիստերին մասնակ-ցություն
1	Թաթուլ Մովսիսյան	Խորհրդի Նախագահ	16
2	Արթուր Հարությունյան	Խորհրդի նախագահի տեղակալ	14
3	Նաիրի Ադամյան	Խորհրդի անդամ	13
4	Դավիթ Անանյան	Խորհրդի անդամ	11
5	Տիգրան Գասպարյան	Խորհրդի անդամ	11
6	Անուշ Գրիգորյան	Խորհրդի անդամ	10
7	Վահագն Համբարձումյան	Խորհրդի անդամ	14
8	Լեռնիկ Հարությունյան	Խորհրդի անդամ	14
9	Արմեն Հովհաննիսյան	Խորհրդի անդամ	12
10	Մանվել Ղազարյան	Խորհրդի անդամ	15
11	Արփինե Ղևոնդյան	Խորհրդի անդամ	8
12	Անժելա Մեսրոպյան	Խորհրդի անդամ	11
13	Հովհաննես Պետրոսյան	Խորհրդի անդամ	15
14	Մելսիկ Պետրոսյան	Խորհրդի անդամ	14
15	Տարոն Վարազդատյան	Խորհրդի անդամ	11

Նիստեր (11.05.2021-31.12.2021)՝ 16 հատ:

Հավելված 7

Պալատի հանձնաժողովներ

h/h	Անվանում	Նախագահ	Նիստեր	Միջոցա-ռումներ	Այլ
1	Որակի պահանջների պահպանման գնահատման հանձնաժողով	Դավիթ Եդիգարյան	4	6	
2	Կարգապահական հանձնաժողով	Դավիթ Անանյան	2	3	
3	Որակավորման հանձնաժողով	Արթուր Հարությունյան	10	3	
4	Անդամակցության հանձնաժողով	Մանվել Ղազարյան	13		1 կարգի մշակում
5	Աուդիտորական գործունեության հանձնաժողով	Էմիլ Վասիլյան	13	5	10 շրջաբերական նամակ (հարցման պատասխան)
6	Հաշվապահական հաշվառման հանձնաժողով	Անուշ Գրիգորյան	4	5	
7	Հարկային և իրավական այլ հարցերի ժամանակավոր հանձնաժողով	Համլետ Սահակյան	6	2	

Անդամակցության պարտավորությունները

1. Որակի ապահովում

Պալատն իրականացնելու է իր անդամ աուդիտորական կազմակերպությունների և աուդիտորների կողմից մատուցվող աուդիտորական ծառայությունների որակի հսկողության պահանջների պահպանման արտաքին գնահատում, ինչպես նաև իր անդամ հանդիսացող փորձագետ հաշվապահի և աուդիտորական կազմակերպությունում չաշխատող աուդիտորի կողմից մասնագիտական օրենսդրության պահպանման, Մասնագիտական էթիկայի կանոնագրքի պահանջների պահպանման արտաքին գնահատում: Վերը նշված արտաքին գնահատումներն իրականացնելու համար մշակվում են համապատասխան ընթացակարգեր:

2. Կրթական միջազգային ստանդարտներ

Պալատը հետևում է ԿՄՍ-ներին, ապահովում է Որակավորման ծրագրի իրականացումը՝ համաձայն թարմացված ԿՄՍ-ների, այդ թվում նաև՝ նախատեսում է հետագայում Որակավորման ծրագրում ներառել նոր քննական առարկաներ:

3. Աուդիտորական գործունեության միջազգային ստանդարտներ

«Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ աուդիտորական գործունեության միջազգային ստանդարտների թարգմանությունը և ընդունումը չի վերապահված Մասնագիտացված կառույցին (Պալատին), սակայն Պալատը պատրաստակամ է մասնակցել աուդիտորական գործունեության միջազգային ստանդարտների թարգմանությանը և օժանդակել այդ ստանդարտների կիրառմանը: Պալատը կարող է տրամադրել մեկնաբանություններ՝ աուդիտորական գործունեության միջազգային ստանդարտների նախագծերի և քննարկվող փաստաթղթերի վերաբերյալ:

4. Մասնագիտական էթիկայի կանոնագիրք

Պալատը սահմանել է իր անդամների համար Մասնագիտական էթիկայի կանոնագրքի պահպանման պահանջ: 2021թ.-ին Պալատն ընդունեց ՀՄԴ Պրոֆեսիոնալ հաշվապահների մասնագիտական էթիկայի կանոնագիրքը՝ նոր խմբագրությամբ:

5. Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներ

Չունենալով հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներն ընդունելու ուղղակի պատասխանատվություն, Պալատը պատրաստ է աջակցել հանրային հատվածի հաշվապահական հաշվառմանը վերաբերող խնդիրների լուծմանը:

6. Կարգապահական պատասխանատվության միջոցներ

«Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Պալատն իրավունք ունի իր անդամների նկատմամբ կիրառել կարգապահական պատասխանատվության միջոցներ: Նշվածն իրականացնելու համար, Արտաքին գնահատման ընթացակարգերի մշակման և ներդրման գործընթացի համատեքստում, Պալատը կսահմանի Կարգապահական պատասխանատվության միջոցների կիրառման կարգը:

7. Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներ

«Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ՖՀՄՍ-ների թարգմանությունը և ընդունումը չի վերապահված Մասնագիտացված կառույցին (Պալատին), սակայն Պալատը պատրաստակամ է մասնակցել ՖՀՄՍ-ների թարգմանությանը և օժանդակել այդ ստանդարտների կիրառմանը: Պալատը կարող է տրամադրել մեկնաբանություններ՝ ՖՀՄՍ-ների նախագծերի և քննարկվող փաստաթղթերի վերաբերյալ:

Հավելված 9

ՀԱԵԽ հանձնաժողովներում Պալատի անդամներ

№	**Հանձնաժողովի անվանում**	**Անուն Ազգանուն**	**Պաշտոն**
1	Կրթության հանձնաժողով	Մագի Նարգիզյան	Պալատի Որակավորման հանձնաժողովի անդամ
2	Մասնագիտության կարգավորման և զարգացման հանձնաժողով	Արամ Հովհաննիսյան	«Էյ-Էմ-Էյչ Աուդիտ» ՓԲԸ տնօրեն
3	ԱՄՍ նախագծերի փորձաքննության հանձնաժողով	Էմիլ Վասիլյան	Պալատի Աուդիտորական գործունեության հանձնաժողովի նախագահ «Գրանթ-Թորոնթոն» ՓԲԸ տնօրենի տեղակալ, աուդիտի բաժնի ղեկավար
4	Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների հանձնաժողով	Արամ Ասատրյան	Ռուսաստանում և ԱՊՀ երկրներում Քեյ Փի Էմ Ջի ընկերության Մասնագիտական գործունեության զարգացման բաժնի ղեկավար Ռուսաստանում ՖՀՄՍ-ների կիրառման միջգերատեսչական աշխատանքային խմբի անդամ
5	Միջազգային համագործակցության հանձնաժողով	Անժելա Մեսրոպյան	Պալատի խորհրդի անդամ, «ՓրայսուոթերհաուսԿուպերս Արմենիա» ՍՊԸ Խորհրդատվական բաժնի ղեկավար
6	Մասնագիտական էթիկայի հանձնաժողով	Լիլիթ Մինասյան	Պալատի Որակի պահանջների պահպանման գնահատման հանձնաժողովի անդամ «Փի–Էյջ–Փի Փարթնըրզ» ՓԲԸ Աուդիտորական ծառայությունների բաժնի ղեկավար

ԵԱՏՄ ԱԽՄ հանձնաժողովներում Պալատի անդամներ

№	Հանձնաժողովի անվանում	Անուն Ազգանուն	Պաշտոն
1	Աուդիտորական գործունեության կարգավորման հանձնաժողով	Դավիթ Անանյան	Պալատի խորհրդի անդամ Պալատի Կարգապահական հանձնաժողովի նախագահ «Դի-Էս-Էյ խորհրդատվական խումբ» ՓԲԸ տնօրեն
2	Անդամակցության և ռեեստրի վարման հարցերի հանձնաժողով	Սերգեյ Յակովլև	Պալատի անդամակցության հանձնաժողովի անդամ «ՓրայսութերհաուսԿուպերս Արմենիա» ՍՊԸ գլխավոր մենեջեր
3	Աուդիտորական գործունեության և մասնագիտական էթիկայի հարցերի հանձնաժողով	Ելենա Ադամյան	«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ մենեջեր
4	Աուդիտորական գործունեության որակի վերահսկողության հանձնաժողով	Դավիթ Եդիգարյան	Պալատի Որակի պահանջների պահպանման գնահատման հանձնաժողովի նախագահ
5	Ատեստավորման և որակավորման բարձրացման հանձնաժողով	Արթուր Հարությունյան	Պալատի խորհրդի նախագահի տեղակալ Պալատի Որակավորման հանձնաժողովի նախագահ «Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ-ի տնօրեն

«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի համաձայն, իրավական կարգավորման առումով, կազմակերպությունները դասակարգվում են հինգ խմբի՝

- Հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպություն,
- Խոշոր կազմակերպություն,
- Միջին կազմակերպություն,
- Փոքր կազմակերպություն,
- Միկրո կազմակերպություն:

Հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպությունը՝ արժեթղթերի հրապարակային առաջարկ կատարող անձ, հաշվետու թողարկող, բանկ, վարկային կազմակերպություն, վճարահաշվարկային կազմակերպություն, ներդրումային ընկերություն, կարգավորվող շուկայի օպերատոր, կենտրոնական դեպոզիտարիա, ապահովագրական ընկերություն, վերաապահովագրական ընկերություն, ապահովագրական բրոքերային կազմակերպություն կամ ներդրումային ֆոնդի կառավարիչ:

Խոշոր, միջին, փոքր և **միկրո կազմակերպությունների** խմբերում դասակարգման համար կիրառվում են հետևյալ ցուցանիշները (տարեկան կտրվածքով).

- հաշվետու տարվա վերջի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվության (հաշվեկշռի) ընդհանուր գումարը,
- հաշվետու տարվա սովորական գործունեությունից հասույթը,
- աշխատողների միջին տարեկան թվաքանակը:

Որպեսզի կազմակերպությունը դասակարգվի այս կամ այն խմբում, պետք է բավարարի երեք ցուցանիշներից առնվազն երկուսի համար Օրենքով սահմանված՝ այդ խմբին վերագրվող, սահմանային մեծություններին.

Թվաքանակ	<= 10	>11 <=100	>101 <=250	>250
Հասույթ	<= 350 մլն	>350 մլն <= 4 մլրդ	>4 մլրդ <= 20 մլրդ	>20 մլրդ
Հաշվեկշռի գումար	<= 175 մլն	>175 մլն <=2 մլրդ	>2 մլրդ <= 10 մլրդ	>10 մլրդ
	ՄԻԿՐՈ	ՓՈՔՐ	ՄԻՋԻՆ	ԽՈՇՈՐ

Հավելված 11

h/h	*ՀԳԳՀ*	*Կազմակերպության անվանում*	*Տնօրենի անուն/ազգանուն*
1	1 20 0202	«Փի-Էյջ-Փի Փարթնըրզ» ՓԲԸ	Հովհաննես Պետրոսյան
2	1 20 0219	«Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ	Անիկ Մարտիրոսյան
3	1 20 0243	«ՓրայսութերհաուսԿուպերս Արմենիա» ՍՊԸ	Ալեքսեյ Ռուսանով
4	1 20 0267	«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ	Վահագն Սահակյան
5	1 20 0301	«Թրասթ Աուդիտ» ՓԲԸ	Հայկ Մարգարյան
6	1 20 0220	«Էյ-Էմ-Էյչ Աուդիտ» ՓԲԸ	Արամ Հովհաննիսյան
7	1 20 0284	«Փըրֆեքթ Աուդիտ» ՍՊԸ	Աղավնի Բաբայան
8	1 20 0370	«Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ	Արթուր Հարությունյան
9	1 20 0351	«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ	Էրիկ Հայրապետյան
10	1 20 0333	«Պրոգրես-Աուդիտ» ՓԲԸ	Արթուր Կիրակոսյան
11	1 20 0330	«Այ էֆ Փի» ՍՊԸ	Աշոտ Բարսեղյան
12	1 20 0353	«ԹՄ Աուդիտ» ՓԲԸ	Թաթուլ Մովսիսյան
13	1 20 0371	«Ջի ընդ Քո Աուդիտ Գրուպ» ՍՊԸ	Լավրենտի Պողոսյան
14	1 20 0389	«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ	Արմեն Հովհաննիսյան
15	1 20 0423	«Գլոբ Աուդիտ» ՍՊԸ	Դավիթ Հարությունյան
16	1 20 0429	«Լոնդոն Բիզնես Գրուպ» ՀՁ ՍՊԸ	Տիգրան Զորյան
17	1 20 0414	«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ	Տիգրան Գասպարյան
18	1 20 0427	«Քրոու Ընդ Ասատրյանս» ՍՊԸ	Ալբերտ Ասատրյան
19	1 20 0400	«Էն Աուդիտ» ՍՊԸ	Վարդան Նիկողոսյան
20	1 20 0440	«Էյվիսի Քոնսալթինգ ընդ Աուդիտ» ՍՊԸ	Մելսիկ Պետրոսյան
21	1 21 0479	«Էկոնոմիկս Աուդիտ» ՍՊԸ	Արմինե Գրիգորյան

22	1 21 0444	«Պրոֆայնընս» ՍՊԸ	Լիլիթ Մայիլյան
23	1 21 0474	«Պի Կա էֆ Աուդիտ Սերվիս» ՍՊԸ	Գոռ Դավթյան
24	1 21 0473	«Երևան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ	Լևոն Ղոնյան
25	1 21 0495	«Դելոյթ Արմենիա» ՓԲԸ	Սրբուհի Հակոբյան
26	1 21 0489	«Մելիքյանս Ընդ Քո» ՍՊԸ	Արամ Մելիքյան
27	1 21 0503	«էֆ էս Փի Ըդվայս» ՍՊԸ	Ռուզաննա Բաղալյան
28	1 21 0546	«Աուդիտ սթար» ՍՊԸ	Արմեն Մելքոնյան
29	1 21 0631	«Աուդիտ Արմենիա» ՓԲԸ	Աննա Ավետիսյան
30	1 22 0666	«ՔեյէմՋի Քոնսալթինգ» ՍՊԸ	Տարոն Վարազդատյան

Հավելված 12

2021թ.-ին աուդիտորական կազմակերպությունների կողմից իրականացված պարտադիր աուդիտներ, աուդիտորական ծառայություններից մատուցումից հասույթ և վճարած անդամավճարներ

h/h	*Կազմակերպության անվանում*	*Իրակա-նացված պար-տադիր աուդիտ ներ (հատ)*	*Աուդիտո-րական ծառայու-թյունների մատուցումից հասույթ (հազար դրամ)*	*Պալատի բյուջեում անդամա-վճար-ների մասնա-բաժին (%)*
1	«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ	40	681,753.2	3.49%
2	«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ	81	575,332.2	4.68%
3	«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ	21	313,630.6	1.82%
4	«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ	13	249,609.8	1.36%
5	«ՓրայսութերհաուսԿուպերս Արմենիա» ՍՊԸ	11	171,966.2	1.08%
6	«Դելոյթ Արմենիա» ՓԲԸ	20	161,581.6	1.38%
Ընդամենը (6 կազմակերպություն)		**186**	**2,153,874.0**	**13.82%**
Ընդամենը (29 կազմակերպություն)		**407**	**2,804,626.6**	**28.55%**

Անդամավճարներ (վճարներ) և վճարման ժամկետներ

Մուտքի վճար	
աուդիտորական կազմակերպություն	36,000 դրամ
աուդիտոր կամ փորձագետ հաշվապահ	10,000 դրամ
Վճարման ժամկետը՝ դիմումից (Խորհրդի որոշումից)՝ 60 օր	

Հաստատուն անդամավճար (տարեկան)	
աուդիտորական կազմակերպություն	250,000 դրամ
աուդիտոր կամ փորձագետ հաշվապահ	36,000 դրամ
Վճարման ժամկետը՝ տվյալ տարվա մինչև մարտի 31-ը	

Փոփոխուն անդամավճար (եռամսյակային)	
Աուդիտորական ծառայությունների մատուցումից հասույթից	0.3%
Առևտրային կազմակերպություններում իրականացված պարտադիր աուդիտների քանակից	40,000 դրամ
Վճարման ժամկետը՝ տվյալ եռամսյակին հաջորդող ամսվա վերջին օրը	